

... 0° 1 ...

 U_L, U''

ժառանգութեան մէջ, երբ մտցրին զինուորացու-
թիւնը մեր երկրում: Այդ տուժին անգամն է
ուրեմն, որ տեղացի երկրաստորները աւարտելով
իրանց զինուորական ծառայութեան ընթացքը,
պիտի վերադառնան իրանց ծննդավայրերը:

Պ. Պօլսից հեռագրում են մայրաքաղաքի լրա-
գրներին սեպտեմբերի 17-ից. «Սուլթանի հրա-
մանով եկեղեցական յանձնաժողովը շտապեցրեց
իր աշխատանքները, այնպէս որ սպասում են, որ
կիրակի օր զեկուցում կը ներկայացվի: Հայոց
խառն ժողովը պնդում է ընդհանուր հրաժարա-
կանի վրա: Պատրիարքական փոխանորդ Ներսէս
վարդապետ Նոյնպէս յայտնեց, որ հրաժարում է,
այդ պատճառով էլ ոչ ոք չի մնաց պատրիարքա-
րանում»:

Թիֆլիսի քաղաքային դռման և վարչութիւնը
արդէն սկսել են հետաքննել նոր ընտրութիւն-
ների հարցով, որ պիտի կայանայ առաջիկայ
քաղաքական համար: Միայն քաղաքի անտարբեր
հասարակութիւնն է, որ քննած կը մնայ մինչև
այն ժամանակ, երբ արդէն ընտրութիւնների
գործը իր քիթի տակին կը լինի, և իր այդ աննա-
խապատրաստութեան հարձակ, ի հարկէ, կարող
է խաղալը դառնալ զանազան թիկնածուների
կուսակցութիւնների ձեռքում:

Մեզ հաղորդում են, որ խորէն եպիսկոպոս
Նարբէյ, որ որոշել էր չվերածին գնալ մեռած
օրնութեան ներկայ լինելու համար, փոխել է իր
դիտարարութիւնը. նա միւս շաբաթ Պօլսի է վե-
րադառնալու: Թիֆլիսից հեռագրուեց առաջ Նար-
բէյ եպիսկոպոսը այս կիրակի վաղից մայր եկե-
ղեցում պատարագ պիտի մատուցանի:

Յիւրանդական սենսորը հրատարակել է մի
կարգադրութիւն, որով արգելում է բնական մե-
ծութեամբ ուսուցաց թղթադրամների պատկերնե-
րով զարդարած աղբիւրանքների առարկաների
պատրաստելը և վաճառումը:

ՎԵԼԻՍԻՍԻՒՅԵՆ մեզ գրում են. «Թիֆլիսից 104
վերստ հեռավորութեան վրա գտնվում է Վելիս-
սիսի անուանով գիւղը, որը բաղկացած է մօտաւո-
րապէս 400 տուն զուտ հայ բնակիչներից:
Արանք հայերն լեզուով խօսել բոլորովին չը գի-
տեն, խօսում են վրացերէն. ունեն մի եկեղեցի
երկու քահանայով և մի միջնաբերդ օրորդաց
ուսումնարան, որտեղ ուսանում են 45 աշակեր-
տուհիներ: Ժողովրդի պարագլուխը միմիայն
այդեգործութիւնն է. զուրս են տանում այստե-
ղից գինի և խաղող: Չը նայած, որ գիւղ տեղ է
բաց շատ դժուարութեամբ կարելի է դանդա-
կաթ, իւր է պանիր և եղածն էլ շատ թանկ են
վաճառում: Այստեղ չաղբի, կիրակի և առ օրե-
րը ժողովուրդը եկեղեցի չէ յաճախում: Երբ հա-
րկում էք պատճառը, պատասխանում են. «մի և
նոյն է, չենք հասկանում քահանայի ասածները»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱԿ

Բերլինի գաղափարն շրջաններում սկսել են խօ-
սել այն մասին, որ իշխան Բիսմարկ այս ձեռք
ուղում է հանդէս գալ՝ իրեն պարամոնտական
գործիչ:

Բիսմարկ այս օրերս մի խօսակցութեան մէջ
յայտնել է, որ ճշմարիտ է ինչն զաղարել է
պաշտօնական անձն լինելուց, բայց չէ զաղարել
քաղաքացի լինելուց:

Իշխանի այդ խօսքերը կատարելապէս համա-
կրելի են, և եթէ նա ճշմարիտ քաղաքացի է
գերմանական պետութեան, նա պարտաւոր է
այս թէ այն ձեռով յայտնել իր կարծիքը և մաս-
նակից լինել այն պետական կեանքին, որը տա-
րիներով և վեր նա զեկավարում էր:

Կատարելա թուղթիւն կը լինի իշխան Բիս-
մարկի կողմից, եթէ նա այժմ զաղարի բոլոր
գործերում խառնակուց, միմիայն այն պատճա-
ռով, որ այլ ևս կանցելի չէ: Պետական գործերի
զեկնի կանգնած մարդը՝ volens, nolens պէտք է
խառնվի պետական բոլոր գործերում, պէտք է
անմիջական մասնակցութիւն ունենայ ընթացիկ
բոլոր ինքնիշխանութիւն Սախայ որոշ համադրութիւն,
հռանդի տէր և գործել ցանկացող մարդը չէ կա-

րող բոլորովին հեռանալ գործելու առարկայից,
միմիայն այն պատճառով, որ այլ ևս պաշտօնա-
կան մարդ չէ, և բարձր գիւրջ չունի:

Իշխան Բիսմարկ, ինչպէս երևում է վերջին
լուրերից, ուղում է ապացուցանել, որ իր մէջ
կար գործելու և անպատճառ գործելու ցանկու-
թիւն:

Նա, իբրեւ գերմանական քաղաքացի, իբրեւ խեղ-
քի և եռանդի տէր մարդ, թէն ոչ իբրեւ նախկին
կանցելի, վճռել է մասնակցել պարլամենտական
գործերին, և մասնակցել կարող հարցերի քնն-
նութեան մէջ:

Կա իւրաքանչիւր քաղաքացու պարտքն է: Իշ-
խան Բիսմարկ ոյժ ունի մասնակցելու պետական
հարցերի պաշտօնական քննութեանը, և պէտք է
հաւատալ, որ այս ձեռք նրա երեսը պարլամեն-
տի մէջ կարող է բաւական նպատակ մի քանի
ինքնիշխանի աւելի պարզելու:

Պատիւ չէր բերի իշխան Բիսմարկին, եթէ նա
կանցելութիւնից հեռանալուց յետոյ, միանգա-
մայն հեռանար գործելու առարկայից, և զաղ-
վէր իր կալուածքում անայն մասը գործերով:

«ՄԱՍԻՍԻ» ԿԱՐԴԻՔԻ ԼԵՅՈՒՄ ՄԱՍԻՆ

Լեզու և գրականութիւն նպատակ մը ունին.
այդ նպատակն է ուսումնասիրել ազգի մը նիւ-
թական, հոգեկան և մտաւորական պէտքերն, և
այդ պէտքերուն գոհացում տալու աշխատել:

Գրողներն ըլլան անտեսադէտ թէ վերաբան,
գիտնական թէ բանաստեղծ, եթէ չեն աշխատել
պարզ դրօսանքի համար, այլ կաշխատին իրենց
ժողովրդին համար, պարտական են հիմնովին
ուսումնասիրել այդ ժողովրդի նիւթական ու բա-
րոյական կեանքը, և գրել այդ կեանքի պահանջ-
ներու համաձայն:

Ուրեմն ուսումնասիրելու է ժամանակակից
կեանքը, գիտնալու է ժամանակակից լեզուն, որ-
պէս զի հնարաւոր ըլլայ ժամանակակից ժողո-
ւրդին համար աշխատել: Ով որ գրաբար կը
սորվի հին կեանքը կը ճանչնայ, հին լեզուն կը
սորվի, բայց բոլորովին օտար կը մնայ ժամանա-
կակից լեզուն, ժամանակակից պահանջներուն:
Եւ բնականաբար ով որ ժողովրդին ժամանակա-
կից կեանքին օտար կը մնայ, նա չը գիտնար
ժողովրդի անտեսական պէտքերն, անտարբեր կը
մնայ անոր ուրախութեանը կամ վշտին. և ինչ
գրէ այսպիսի մի մարդ. անպէտ գրութիւններ
պիտի գրէ կամ անպէտ թարգմանութիւններ
պիտի ընէ: Այս եղան է ահա գրաբարի ուղղու-
թեան արդիւնքը:

Միանգամ ընդ միշտ բոլորեալ է թէ՛ մենք
որո՞ւ համար կ'ապրենք, մեզ համար, մեր զաւակ-
ներուն համար, թէ՛ մեր նախնայորդուն համար:
Եթէ մենք կ'ապրենք մեզ ու մեր զաւակներուն
համար, պէտք է մտածենք թէ մենք ինչպէս կը
խօսինք, ինչպէս կը գրենք, այնպէս սորվելու ու
սորվեցնելու, իսկ եթէ պիտի շարունակենք մտա-
ծել մեր նախնայորդուն և պիտի ապրենք անոնց
համար, երթանք փափուկը վանքերու մէջ, լանք,
լանք ու մեռնինք:

Ոչ, մենք հինքուն համար չենք ապրել, մեզ
համար կ'ապրենք, մեր զաւակներուն համար կ'ապ-
րենք, ուրեմն մեզ պէտք է ոչ թէ հինցած, ան-
հասկնալի, մեզ համար առեղծուած եղող լեզու
մը, այլ մեր ժամանակակից, կենդանի, ժողովր-
դային լեզուն:

Շատ հարուստ է ժողովրդի լեզուն, և հայոց
լեզուն պէտք է միտուել ժողովրդի բերնին մէջ
և ոչ թէ հին գրքերու մէջ:

Այդ հին գրքեր կը պարունակեն հայերէն բա-
ռերու բացատրութիւններու մէջ մասը, բայց ոչ
ամբողջութիւնը: Մեր հին հեղինակներն ու թարգ-
մանիչները գործածած են այն բառերն ու քաջա-
արութիւններն, որոց պէտք ունէին յայտնելու
համար իրենց գաղափարներն, բայց կրնանք ար-
համարել և գործածութիւնէ դուրս ձգել բառեր
ու քաջատրութիւններ, որոց պէտք չեն ունեցած
մեր նախնի գրողներն:

Ինչ բառեր ու քաջատրութիւններ որ կը
գտնուին գրքերու մէջ, կը գտնուին նաև ժողո-
ւրդի բերնին մէջ, բայց ինչ բառեր ու քաջա-
տրութիւններ որ կը գտնուին ժողովրդի բերնին
մէջ, անոնք չեն գտնուիր գրքերու մէջ. հետեա-
լ բար մեր գրականութեան գանձարանը ժողովրդի
լեզուն է և ոչ թէ գրքը, ուստի և մեր արդի,
գրական ու ուսումնական լեզուն մշակելու ա-
ռաջին պայմանն է դիմել ժողովրդի լեզուն:

Նախապաշարում է նաև այն կարծիք թէ՛ գրա-
բարը միութեան կապ է զանազան երկրներու
հայոց միջև: Բնաւ: Մեր ժողովրդը բնաւ գրա-
բար չը հասկնար. Պօլսի հայը գրաբար չը գրեր,
չը խօսիր, խարբերդի հայը գրաբար չը գրեր չը
խօսիր, Երզնկայի հայը գրաբար չը գրեր չը
խօսիր, Փարսիի հայը գրաբար չը գրեր չը խօսիր,
Երևանի հայը գրաբար չը գրեր չը խօսիր, Թիֆ-
լիսի հայը գրաբար չը գրեր չը խօսիր, Թէհրանի
հայը գրաբար չը գրեր չը խօսիր, Կապացի հայը
գրաբար չը գրեր չը խօսիր, ուրեմն այս երանելի
գրաբարը զով իրարու հետ կը կ'ապէ: Հնդկաս-
տանի մէջ մի քանի հայեր եթէ կը խօսին աղա-
ւաղալ գրաբար մը, միթէ ատոր համար միլիո-
նաւոր հայերը պէտք է գոհուին:

Ամենքս ալ աշխարհիկ լեզուով կը խօսինք ու
կը գրենք, և մեր այս զանազան աշխարհիկ բար-
բառներու մէջ արդէն միութեան կէտերը սկսած
են հաստատուել. անգղալեզու իրարու կը մօտե-
նանք. իրարու լեզու կը հասկնանք այնքան ա-
ւելի, որքան աւելի կը հեռանանք գրաբարէն:

Արարատ-Վոլկասեան հայերը բարեբաղդութիւն
ունեցան գրաբար չը սորվելու, հետեալք իրենց
աշխարհաբարի ուղղութիւնը վնասեցին ժողո-
ւրդի լեզուն մէջ, և արաւորեցին գրականութիւն
մը որ ունի իր քերականութիւնը, կանոնաւոր և
որոշ սահմաններու. ներքե լեզուական օրէնքներ
ու կանոններ ունին աշխարհաբարի համար: Արա-
բատ-Վոլկասեան հեղինակ մը երբ գրէ, միայն
ոճին կը նայի, բայց բնաւ չը յոգնի քերականու-
թեան համար, հոլով, բայ, համաձայնութիւն
ամէն ինչ որոշուած է. գրաբարէն դուրս է այդ
ամէնը:

Արարատ-Վոլկասեան մատենագրութիւնը մենք
չատ աւելի, անհամեմատ աւելի, ճիշդ է դուտ
ազգային գրականութեամբ. ինչո՞ւ. վասն զի
գրադէտն աշխարհաբար լեզուն ժողովրդի բերնին
մէջ սորվեցած, անոր պէտքերուն գիտել եղաւ
և գրեց այդ պէտքերուն համար: Մենք օտար եր-
կրներու, օտար ազգերու նկարագրութիւններն
ըրինք, զի հին գրքերու մէջ քաջ գրաբար սորվե-
ցանք. Արարատ-Վոլկասեան իրենց բնակայրի,
հայոց ազգի նկարագրութիւններն ըրին, վասն զի
կենսացնող ժողովրդի մէջ սորվեցան հայերէն
աշխարհաբարը:

Ազգային աշխարհաբարը մեր լեզուական միու-
թիւնը պիտի պահպանէ. մենք պարտաւոր ենք
թողուլ գրաբարեան աշխարհաբարը և սորվել
կենդանի աշխարհաբարը. հայոց ամէն ստուար
մեծամասնութեան լեզուն այդ աշխարհաբարն է.
Պօլսի հայերը բնաւգրօսիկ միջոցներով կ'ուզեն
ստեղծել աշխարհաբար մը որուն բնաւնի չէ հայ
ազգը:

Այս երեւոյթ տարօրինակ չէ. մենք Պօլսեցի
գաղթականներն, որքան որ ժամանակն կը բաժնէ
զմիզ մեր գաղթականութեան թուականէն, այն-
քան աւելի օտարական կը դառնանք բնակայրի
և անոր բնակիչներուն: Բնակայրի հայերն իրենց
հոգին վրայ կը պահեն իրենց սիրտն, իրենց
լեզուն, իրենց աւանդութիւնները: Բնական ընդ-
հանուր տարածութեան վրայ մի և նոյն լեզուն
է, մենք օտարացած հայերս կորսնցուցած ենք, և
ուրիշ կերպ կարելի չէ, բուն ազգային յատկա-
նիշներն: Եւ դժբաղդութիւնն այն է որ մենք
ուղղութիւն կ'ուտանք այդ տեղերու հայոց մտքի
ու սրտի, լեզուի կրթութեան ու զարգացումին,
մեր օտարացած հայոց խորթ կրթութիւնը և
լեզուն պարտաւորել ընել կուզենք: Սակայն որ-
քան վնաս որ կրնանք հասցնել, այսու հանդերձ
չը պիտի կրնանք մաքառել բնական ու պատմա-
կան օրէնքներու դէմ, և բնակայրի հայերն իրենց
բնական ուղղութիւնը պիտի զարգանան:

Եթէ գրաբարը կը վնասէ աշխարհաբարին, եթէ
գրաբարը չը կրնար հաստատուել լեզուական միու-
թիւն զանազան երկրներու հայոց միջև, գրաբա-
րը կը վնասէ նաև մեր ազգային պատմութեան և
մեր կրօնքին: Այդ կըսենք թէ մեզաւորը նոյն
վնասէ պէտք չէ հասկնալ թէ մեզաւորը նոյն
կրնար գրաբար լեզուն ըլլայ. այդ լեզուն իր գերն
կատարած է իր ժամանակին. մեզաւորն անոնք
են որ կը կարծեն թէ՛ օգտակար է գրաբարի եր-
կաթէ չըլանակին մէջ բանտարդել պատմութիւն
ու կրօնը:

Պատմութեան նպատակը լեզու տարածել չէ,
այլ բան սորվեցնել: Պատմութիւնը որքան աւելի
ժողովրդի հասկցած լեզուով աւանդուի, այնքան
աւելի կը հասնի իր նպատակին: Բայց գրաբա-
րեաններն որք ուղղութիւն կ'ուտան ազգային

զատարարութեան, այն զաղափարն ունին թէ՛
Երզնէն ու խորհնացին պէտք է կարգալ նոյն իսկ
իրենց բնագիր լեզուով: Այս արտառուց պահան-
ջում արդիւնք է որ ազգին անձանթ մնացած
են Երզնէ, խորհնացի, Աղաթանգեղոս, Լաստիվե-
րացի և այլն: Քանի մը մասնագէտներ, քանի մը
ուսուցիչներ և վարդապետներ, ահա գրաբար
պատմադրի կարողացողներն:

Իսկ այն օրն որ պատմութիւնը կը զաղրի
գրաբար ըլլալէ, իրաւ միանգամայն և ժողովր-
դական, ինչպէս տեսնուեցաւ խորհնացի աշխար-
հաբար թարգմանութեամբ:

Ուրեմն եթէ կուզենք որ մեր ազգային պատ-
մութիւնը տարածուի ժողովրդի մէջ, պէտք է
զայն փրկել գրաբարէ, և աշխարհաբար թարգմա-
նութեամբ տարածել ժողովրդի մէջ:

Ա. Արիւխարեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լուր է պտուղ, որ իբր թէ գերմանական
Վիլհելմ կայսրը ցանկանում է անձամբ տեսակցել
Ֆրանսիական հանրապետութեան նախագահի
հետ:

—Վիլհելմայից լրագրիներն հեռագրում են, որ
թիւրքաց կառավարիչները Մակեդոնիայում վա-
խենում են այնտեղի բոլշակների ապստամբու-
թիւնից: Բազմաթիւ կապաւորութիւններ են լի-
նում:

—Մայրաքաղաքի լրագրիներն Վիլհելմայից հե-
ռագրում են սեպտեմբերի 12-ին հեռագրել. «Այ-
սօր վախճանից այստեղ յայտնի գիտական Լո-
քենց Դեմէյն»:

—Հռոմից հեռագրում են, որ երեքշաբտեան
զախակցութեան հակառակորդները Հռոմում կաղ-
մն են ֆրանս-իտալական մի բանկէտ:

—Իշխան Բիսմարկ Վիլհելմայից գնալուց առաջ
ասել է իրան այցելող մի օտարազգի պետական
գործիչին. «Գուց կարծում էք, թէ ես կը ցան-
կայի կրկին իմ նախկին պաշտօնը ստանձնել: Հա-
ւատացե՛ք, որ այն բոլոր անցքերից յետոյ,
որ կատարվեցան պաշտօնիցս հեռանալուց յե-
տոյ, ես բոլորովին ցանկութիւն չունեմ նախկին
պաշտօնի մէջ լինել»:

—Սեպտեմբերի 9-ին Օպորտունո մեծ անկար-
գութիւններ եղան: Հանրապետական կուռքի ա-
ռաջ հաւաքվեց մեծ բաղնիքիւն, որին բոցալաւ
ճառերով դիմեցին Վալկոնիստու և Բրազա պատ-
գամաւորները: Բրազա յայտնեց, որ միապետու-
թեան վերջին ժամը հասել է: Այդ խօսքերը
ամբոյն ընդունեց «կեցցէ՛ հանրապետութիւն»,
կորչի Անդրէա՝ ազգաբնակչութիւնը: Դրանից յետոյ
ամբոյն և հեծելազոր ժողովրդի մէջ արկնա-
հեղ կուռ սկսվեց: Հաւատացում են, որ հանրա-
պետական ցոյցերին մասնակցում էին մինչև ան-
գամ Օպորտունո գետեղված գնդերի մի քանի
զինուորներ:

ԻՍԱՆ ԼՈՒՐԵՐ

Սըր Հովարդ Գրոքը Գուրլինում վերջացում
է մի այնպիսի տեղի և օ պի չինել, որը իր
մեծութեամբ ամենամեծը կը լինի Եւրոպայում:
Այդ տեղիկովը Գրոքը չիմում է գրեթէ իշխան
դիտանոցի համար:

—*
—Վմերիկական լրագրիները պատմում են, որ
Ջոն Բոկֆելդը 2 միլիոն դոլար է նուիրել Չիկա-
գոի համալսարանին: Դեռ. Նոյնրս նոյն բարե-
գործը նուիրել էր այդ մի և նոյն համալսարանին
մի միլիոն դոլարից աւելի:

—*
—«Բրիտանական ընկերութեան» աշխարհագրա-
կան և քաղաքաշինական բաժնի վերջին նիս-
տում Բոկֆելդը յայտարարեց, որ երկրապաշտ
վրա տեղ կայ 5,094 միլիոն բնակիչներ: համար,
եթէ հայուի առեկնք Աֆրիկայում գտած նոր
հողերը և Ամերիկայի ու Ասիայի սակաւ բնակեց-
րած տեղերը: Վերոյիշեալ թիւին ազգաբնակու-
թիւնը կարող է հասնել 182 տարուց յետոյ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԵՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒԴ, 20 սեպտեմբերի «НОВОСТІ» լրա-
գրի հեռագրում են յիշելի-Նովոբորոգի, որ չորեքնա-
ւային «Գրութիւն» ընկերութիւնը զաղարեցրեց իր
վճարումները: Պատրաստի գումարը 2,690,000 ռ-
է, իսկ պարտքը 2,320,000 ռուբլի: Երէկ տեղի ու-

27-100 (k. 2.)